



Վերջին Թարմացումները. (փոփոխությունները նշված են դեղին գույնով)

11/2/21. Ուժի մեջ է մտնում 2021թ. նոյեմբերի 8-ից. կենդանի ներկայացումներ անցկացնող փակ վայրերը, ներառյալ կատարողական արվեստի թատրոնները, երաժշտական և համերգային միջոցառումներ անցկացնող վայրերը և մեծահասակների ժամանցային վայրերը, ինչպես նաև 5000-ից 9999 մասնակիցներով բացօթյա միջոցառումները, որոնք անց են կացվում Լոս Անջելես Քաղաքում (LA), ենթակա են Լոս Անջելես Քաղաքի Պատվաստումների մասին Հրամանագրին: Ավելացվել են Հանձնախմբի Տրվող Հարցեր (ՀՏՀ) և հղումներ՝ միջոցառումների վայրերում վարակման ազդեցությունը բացատրելու համար:

Հանախ Տրվող Հարցերի (ՀՏՀ) տվյալ փաստաթուղթը նախատեսված է՝ աջակցելու միջոցառումների կազմակերպիչներին համապատասխանել Լոս Անջելեսի Շրջանի [Հանրային Առողջության Պատասխանատուի Հրամանին](#): Այս ՀՏՀ-ն վերաբերում է մեծ միջոցառումներին, ներառյալ Մեզա Միջոցառումները, որոնք սահմանվում են որպես փակ տարածքներում անցկացվող միջոցառումներ՝ 1000 կամ ավել մասնակիցներով, և բացօթյա միջոցառումներ՝ 10000 կամ ավել մասնակիցներով: Մեզա Միջոցառումների օրինակները ներառում են հետևյալը, բայց չեն սահմանափակվում դրանցով՝ համաժողովներ, կոնֆերանսներ, ցուցահանդեսներ (expo), համերգներ, ներկայացումներ, գիշերային ակումբներ, մարզական միջոցառումներ, կենդանի և ժամանցային միջոցառումներ, տոնավաճառներ, փառատոներ, շքերթներ, գվարճանքների թեմատիկ այգիներ (theme parks), ատրակցիոններ, ջրաշխարհներ, մեծ մասնավոր միջոցառումներ կամ հավաքույթներ, մարաթոններ կամ ավտոմեքենաների մրցումներ և մեքենաների ցուցադրություններ:

1. Որո՞նք են Հանրային Առողջության Պատասխանատուի Հրամանի պահանջները, և ե՞րբ են դրանք ուժի մեջ մտնում:

Հանրային Առողջության Պատասխանատուի Հրամանը Մեզա Միջոցառումների կազմակերպիչներից պահանջում է ձեռնարկել լրացուցիչ քայլեր՝ ստուգելու հանախորդների մեծամասնության պատվաստման կարգավիճակը: Ստորև ներկայացված են Մեզա Միջոցառումներին վերաբերող պահանջները և անհրաժեշտ գործողությունները:

- ✓ Մեզա Միջոցառումներ.
 - ✓ Փակ տարածքներում անցկացվող Մեզա Միջոցառումների (1000+ մասնակիցներ) բոլոր մասնակիցները պետք է շարունակեն նախքան ներս մտնելը ներկայացնել COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստման ապացույց կամ (ախտորոշիչ) թեստի բացասական արդյունք: Մինչև 2 տարեկան երեխաներն ազատվում են այս պահանջից:
 - ✓ 2021 թվականի հոկտեմբերի 7-ից սկսած՝ Բացօթյա Մեզա Միջոցառումներին (10000+ մասնակից) մասնակցող 12 տարեկան և ավելի բարձր տարիքի բոլոր անձինք պետք է նախքան մուտք գործելը ներկայացնեն COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստման ապացույց կամ (ախտորոշիչ) թեստի բացասական արդյունք:
 - ✓ 2021 թվականի նոյեմբերի 1-ից սկսած՝ Մեզա Միջոցառումների Կազմակերպիչներից պահանջվում է ստուգել 18 տարեկան և ավելի բարձր տարիքի բոլոր այցելուների պատվաստման կամ COVID-19-ի վիրուսային թեստի բացասական արդյունքների





COVID-19-ի դեմ ՊԱՏՎԱՍՏՈՒՄ ԿԱՄ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅԱՆՁ. ՀՏՀ ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԸ

ապացույցը՝ դրանց տվյալերը համեմատելով լուսանկարով նույնականացման քարտի տվյալների (ID) հետ (cross-check):

- ✓ Բանավոր վկայությունն այլևս բավարար չէ պատվաստման կամ թեստավորման կարգավիճակը հաստատելու համար:
- ✓ Հաստատման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս [Պատվաստման Հաստատման Ուղեցույցը](#) և [Թեստավորման Հաստատման Ուղեցույցը](#):

2. Ինչու՞ են Մեզա Միջոցառումները ավելի մեծ վտանգ ներկայացնում:

Մեզա Միջոցառումները ավելի մեծ վտանգ են ներկայացնում COVID-19-ի տարածման համար, քանի որ միջոցառման մասնակիցները երկար ժամանակ են անցկացնում ֆիզիկապես մոտ գտնվելով մեծաթիվ մարդկանց, որոնց հետ նրանք սովորաբար չեն շփվում՝ դրանով իսկ մեծացնելով շնչառական մասնիկների փոխանցման վտանգը մասնակիցների շրջանում, եթե ներկաներից որևէ մեկը վարակված է:

Վտանգը մեծանում է՝ նաև կախված շրջակա միջավայրի պայմաններից: Ըստ հրապարակված գեկույցների՝ վարակման վտանգը մեծացնող գործոնները, ներառյալ վարակի փոխանցումը ավելի քան 6 ոտնաչափ հեռավորության վրա գտնվող մարդկանց, ներառում են.

- **Անբավարար օդափոխությամբ կամ օդափոխության համակարգի բացակայությամբ փակ տարածքներ**, որոնք թույլ են տալիս արտանետվող շնչառական հեղուկների, հատկապես շատ փոքր կաթիլների և աերոզոլային մասնիկների կուտակումը օդում:
- **Շնչառական հեղուկների առատ արտանետում**, որը կարող է առաջանալ վարակված անձի կողմից ֆիզիկական ուժ գործադրելու կամ ձայնը բարձրացնելու հետևանքով (օրինակ՝ ֆիզիկական վարժություններ կատարելիս, բղավելիս, երգելիս):
- **Երկարատև ներկայությունն** այսպիսի պայմաններում:

3. Մեր հաստատությունը գտնվում է Լոս Անջելես Քաղաքում: Ինչպե՞ս է Լոս Անջելես Քաղաքի Պատվաստումների մասին Հրամանագիրը ազդում այն միջոցառումների վրա, որոնք տեղի են ունենալու Լոս Անջելես Քաղաքում:

Ուժի մեջ է մտնում 2021թ. նոյեմբերի 8-ից. կենդանի ներկայացումներ անցկացնող փակ վայրերը, ներառյալ կատարողական արվեստի թատրոնները, երաժշտական և համերգային միջոցառումներ անցկացնող վայրերը և մեծահասակների ժամանցային վայրերը, ինչպես նաև 5000-ից 9999 մասնակիցներով բոլոր բացօթյա միջոցառումները, որոնք անց են կացվում Լոս Անջելես Քաղաքում ենթակա են [Լոս Անջելես Քաղաքի Պատվաստումների Մասին Հրամանագրին](#):

Այնուամենայնիվ, Լոս Անջելես Քաղաքի Հրամանագիրը բացահայտ կերպով նշում է, որ հրամանագրի պահանջները չեն վերաբերում <<բոլոր այն վայրերին, որոնցից, Հանրային Առողջության Վարչության Հրամանի համաձայն, պահանջվում է ստուգել COVID-19-ի դեմ պատվաստման կարգավիճակի ապացույց հանդիսացող փաստաթուղթը՝ նախքան փակ վայրում տվյալ անձին սպասարկելը>>: Սա նշանակում է, որ Լոս Անջելես Քաղաքում տեղի ունեցող Փակ Մեզա Միջոցառումները (փակ տարածքում անցկացվող միջոցառումներ՝ 1000-ից ավել մասնակիցներով) ենթակա չեն Հրամանագրին





և փոխարենը պետք է շարունակեն հետևել Շրջանի [Առողջության Վարչության Պատասխանատուի Հրամանով](#) սահմանված պատվաստման պահանջներին:

Լուս Անջելես Քաղաքում միջոցառումներ անցկացնող բոլոր մյուս հաստատությունները պետք է կարդան [Լուս Անջելես Քաղաքի Հրամանագիրը](#) և հետևեն Հրամանագրի պահանջներին: Լուս Անջելես Քաղաքի Հրամանագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ հասանելի են [SafePass LA](#) կայքէջում:

4. Հանրային Առողջության Պատասխանատուի ո՞ր պահանջներն են վերաբերում իմ միջոցառմանը:

Վտանգի չափը տարբերվում է՝ կախված միջոցառման չափից և փակ կամ բացօթյա տարածքում լինելու հանգամանքից: Բացօթյա միջոցառումները և այն միջոցառումները, որոնք ունեն ավելի քիչ թվով մասնակիցներ, վարակի փոխանցման ավելի քիչ վտանգ են ներկայացնում, քան մեծ, փակ տարածքում անցկացվող միջոցառումները: Ստորև ներկայացված է աղյուսակ, որը նկարագրում է այս երկու միջոցառումների բնորոշիչների հիման վրա կիրառվող տարբեր կանոնները:

Ուժի մեջ է մտնում 2021 թվականի նոյեմբերի 8-ից. Լուս Անջելես Քաղաքում անցկացվող 1000-ից քիչ մասնակիցներով փակ միջոցառումները և 5000-ից 9999 մասնակիցներով բացօթյա միջոցառումները պետք է համապատասխանեն Լուս Անջելես Քաղաքի Պատվաստումների Հրամանագրի պահանջներին՝ ինչպես նկարագրված է սույն ՀՏՀ-ում:

Միջոցառման Տեղանքը	Մասնակիցների Քանակը	Դիմակ կրելու կանոնները	Արդյո՞ք հաճախորդներից պահանջվում է ամբողջովին պատվաստման (կամ վերջին 72 ժամվա ընթացքում արված բացասական արդյունքով թեստի) ապացույց	Ելույթ ունեցողներին ուղղված պահանջներ
ՓԱԿ	1000-ից քիչ	Բոլոր պատվաստված և չպատվաստված մասնակիցներից պահանջվում է դիմակ կրել	Պահանջվում է, եթե հաստատությունը գտնվում է Լուս Անջելես Քաղաքում*, այլապես խստորեն խորհուրդ է տրվում	<ul style="list-style-type: none"> Ելույթ ունեցողները կարող են հանել դիմակները փակ տարածքներում հանդես գալու համար, եթե ամբողջովին





**COVID-19-ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄ ԿԱՄ ԹԵՍԱՎՎՈՐՄԱՆ ՊԱՅԱՆՁ. ՀՏՀ
ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԸ**

	1000 կամ ավելի	Բոլոր պատվաստված և չպատվաստված մասնակիցներից պահանջվում է դիմակ կրել	Պահանջվում է	<p>պատվաստված են կամ շաբաթական առնվազն երկու անգամ թաստավորվում են:</p> <ul style="list-style-type: none"> • Կարող են դիմակները հանել նաև բացօթյա տարածքում գտնվելիս: • Լավ կլիևի, որ, ելույթ ունեցողները հանդիսատեսից գտնվեն առնվազն 12 ոտնաչափ հեռավորության վրա:
ԲԱՏՈԹՅԱ	5000-ից քիչ	Խորհուրդ է տրվում, սակայն պարտադիր չէ	Խորհուրդ է տրվում	
	5000-ից 9999	Խորհուրդ է տրվում, սակայն պարտադիր չէ	Պահանջվում է, եթե հաստատությունը գտնվում է Լոս Անջելես քաղաքում*, այլապես խստորեն խորհուրդ է տրվում	
	10000 կամ ավելի	Բոլոր պատվաստված և չպատվաստված մասնակիցներից պահանջվում է դիմակ կրել	Պահանջվում է	

*1000-ից քիչ մասնակիցներով փակ միջոցառումները և 5000-ից 9999 մասնակիցներով բացօթյա միջոցառումները, որոնք անցկացվում են Լոս Անջելես քաղաքի տարածքում, պետք է համապատասխանեն [Լոս Անջելես քաղաքի Պատվաստումների Վերաբերյալ Հրամանագրի պահանջներին](#):

5. Ինչու՞ է Շրջանի Հանրային Առողջության Պատասխանատուն պահանջում ներկայացնել պատվաստման ապացույց որոշ բիզնեսներ մուտք գործելու և Մեգա Միջոցառումներին մասնակցելու համար:

Հանրային Առողջության Պատասխանատուն ձեռնարկում է այդ քայլը COVID-19-ի հարուցիչ վիրուսի ավելի հեշտ տարածվող Դելտա ենթատեսակի շարունակական տարածման և ներկա պահին Շրջանում վարակման բարձր մակարդակի պատճառով: Պատվաստում պահանջելն այն անձանցից, որոնք մուտք են գործում ավելի բարձր վտանգ ներկայացնող բիզնեսներ, կնպաստի համայնքում վիրուսի տարածման նվազեցմանը, այդ պայմաններում աշխատողների և հաճախորդների համար վտանգի նվազեցմանը, ինչպես նաև վարակման վտանգի ներքո գտնվող բնակիչներին ավելի կիրախուսի պատվաստվել: Պատվաստանյութերն անվտանգ և արդյունավետ են, լայնորեն հասանելի են Շրջանում և հանդիսանում են լավագույն միջոցը ձեր՝ COVID-19-ով վարակվելու և ծանր հիվանդանալու վտանգը նվազեցնելու:





COVID-19-ի դեմ ՊԱՏՎԱՍՏՈՒՄ ԿԱՄ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՁ. ՀՏՀ ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԸ

համար: Իմացեք ավելին COVID-19-ի պատվաստանյութերի մասին [Լոս Անջելեսի Շրջանի Պատվաստանյութերի](#) կայքէջում:

6. Ինչպե՞ս են բիզնեսները ստուգում պատվաստման կարգավիճակը:

Հիշեցում: Պատվաստման կարգավիճակի ստուգումը վերաբերում է միայն 12 տարեկան և ավելի բարձր տարիքի մասնակիցներին: Սկսած 2021 թվականի նոյեմբերի 1-ից՝ այս պահանջը ուժի մեջ մտնելու պահից՝ կազմակերպիչները պետք է սկսեն ստուգել և՛ լուսանկարով նույնականացման քարտը (ID), և՛ պատվաստման և COVID-19-ի թեստի բացասական արդյունքների ապացույց՝ համեմատելու դրանց տվյալները: Լուսանկարով նույնականացման քարտի ստուգումը վերաբերում է միայն 18 տարեկան և ավելի բարձր տարիքի այցելուներին: Հանրային Առողջության Պատասխանատուի Հրամանին ենթակա բիզնեսները պետք է կատարեն երկու ստուգում:

- ✓ **Ստուգեն՝ արդյոք մասնակցի պատվաստման քարտի վրա նշված անունը համապատասխանում է լուսանկարով նույնականացման քարտի տվյալներին (ID) (Եթե 18+ է), ԵՎ**
- ✓ **Ստուգեն COVID-19-ի դեմ պատվաստման ապացույցը՝ պատվաստման տեսակի և ամսաթվ(եր)ի համար.**
 - Johnson & Johnson (J&J) պատվաստանյութերով պատվաստման դեպքում, անհրաժեշտ է ստուգել ներարկված միակ դեղաչափը, որը պետք է արված լինի տվյալ օրվանից առնվազն 14 օր առաջվա ամսաթվով:
 - Pfizer կամ Moderna պատվաստանյութերով պատվաստման դեպքում, անհրաժեշտ է ստուգել երկու դեղաչափերի ներարկման ամսաթվերը: Ամենավերջին ներարկման ամսաթիվը պետք է լինի տվյալ օրվանից առնվազն 14 օր առաջվա ամսաթիվը:

Կան պատվաստման վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր, որոնք ընդունվում են որպես ապացույց.

- ✓ **Պատվաստումների Գրանցումների Քարտը կամ Բժշկական Քարտը**
 - ✓ CDC-ի COVID-19-ի դեմ Պատվաստման Գրանցումների Քարտ
 - ✓ Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) Պատվաստումների Գրանցման Քարտ
 - ✓ Պատվաստման վերաբերյալ փաստաթղթեր բժշկական ծառայություններ տրամադրողի կամ հաստատության կողմից, որն իրականացրել է COVID-19-ի դեմ պատվաստումը
 - ✓ Կալիֆորնիայի պատվաստումների Գրանցամատյանում (CAIR2) Պատվաստումների Մասին Գրանցում
- ✓ **Պատվաստումների Թվային Գրանցում**
 - ✓ Տրված Կալիֆորնիայի Հանրային Առողջության Վարչության կողմից
 - ✓ Հաստատված ընկերություն, ինչպես օրինակ՝ Healthvana կամ Carbon Health

Տե՛ս Լոս Անջելեսի Շրջանի [COVID-19-ի դեմ Պատվաստումը Հաստատող Տեսողական Ուղեցույցը](#) պատկերների և ավելի մանրամասն տեղեկությունների համար:





7. Ինչպե՞ս են բիզնեսները ստուգում նախքան մուտք գործելը ներկայացվող COVID-19-ի դեմ (ախտորոշիչ) թեստի արդյունքները:

Սա վերաբերում է Փակ տարածքներում անցկացվող Մեգա Միջոցառումների բոլոր մասնակիցներին և Բացօթյա Մեգա Միջոցառումների 12 տարեկան և բարձր տարիքի այն մասնակիցներին, որոնք չեն տրամադրում COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստման ապացույց: Թեստի արդյունքները պետք է տրամադրվեն և ստուգվեն նախքան ներս մտնելը: Մինչև 2 տարեկան երեխաները ազատվում են նախքան ներս մտնելը թեստավորման պահանջներից:

2021 թվականի նոյեմբերի 1-ից սկսած՝ Մեգա Միջոցառումների Կազմակերպիչները պետք է ստուգեն և՛ այցելուների լուսանկարով նույնականացման քարտը (ID), և՛ պատվաստման և COVID-19-ի թեստի բացասական արդյունքների ապացույցը՝ համեմատելու դրանց տվյալները: Այս պահանջը վերաբերում է միայն 18 տարեկան և ավելի բարձր տարիքի այցելուներին:

Բիզնեսները պետք է ձեռնարկեն հետևյալ քայլերը՝ ստուգելու և հաստատելու միջոցառմանը մասնակցող անձի COVID-19-ի (ախտորոշիչ) թեստի բացասական արդյունքները.

- ✓ Ստուգեք, արդյոք թեստի պատասխանի վրա նշված անձի անունը և ծննդյան ամսաթիվը, եթե նշված է, համապատասխանում են լուսանկարով նույնականացման քարտի (ID) (եթե 18+ է) տվյալներին, ԻՍԿ COVID-19-ի (ախտորոշիչ) թեստի արդյունքի վերաբերյալ փաստաթղթերը պետք է ցույց տան, որ՝
 - ✓ Թեստի արդյունքը բացասական է, ԵՎ
 - ✓ Թեստը կատարվել է վերջին 72 ժամվա ընթացքում, ԵՎ
 - ✓ Թեստը COVID-19-ի կամ SARS-CoV-2 հակազենի (Ag) կամ ՊՇՌ/ՆԱԹ (PCR/NAAT) թեստ է, ԵՎ
 - ✓ Թեստը կատարվել է լաբորատորիայի կամ բժշկական ծառայություններ տրամադրողի կամ թեստավորման ծառայություններ մատուցողի կողմից կամ հիվանդների բժշկական հարթակում (օրինակ՝ Healthvana):

Տե՛ս Լոս Անջելեսի Շրջանի [COVID-19-ի Թեստի Բացասական Արդյունքը Հաստատող Տեսողական Ուղեցույցը](#) պատկերների և ավելի մանրամասն տեղեկությունների համար:

8. Արդյո՞ք աշխատակիցները պետք է պահպանեն մասնակիցների պատվաստման կարգավիճակի կամ բացասական թեստի փաստաթղթերը կամ ստուգման գործընթացի վերաբերյալ արձանագրությունը:

Ոչ: Յուրաքանչյուր հաճախորդի թույլատրելով նստել, օգտվել ծառայություններից կամ մասնակցել հաստատությունում անցկացվող գործողություններին՝ հաստատության սեփականատերը/ղեկավարությունը փաստում է, որ նախքան յուրաքանչյուր մասնակցի ներս մտնելը հաստատությունը պատշաճ կերպով ստուգել է նրանց պատվաստման կարգավիճակը կամ բացասական թեստի փաստաթուղթը: Բիզնեսը անհամապատասխանության համար կենթարկվի որևէ տույժի, եթե պարզվի, որ այն պատշաճ կերպով չի կատարել պատվաստման կարգավիճակի ստուգման գործընթացը:





9. Ինչպե՞ս պետք է հաշվարկվի մասնակիցների քանակը՝ միջոցառումը որպես Մեգա Միջոցառում որակելու համար:

Միջոցառման ժամանակ վարակի տարածման վտանգը մեծանում է՝ ներկա գտնվողների թվի աճին, ներկաների միջև սերտ շփմանը և միջոցառման տևողության ավելացմանը զուգահեռ: Միջոցառումների կազմակերպիչները պետք է հաշվարկեն իրենց միջոցառման չափը ցանկացած պահի միջոցառման վայրում կամ միջոցառման անցկացման համար սահմանված տարածքում սպասվող մասնակիցների ընդհանուր թվի հիման վրա: Կարճատև միջոցառումների դեպքում (3 ժամ կամ ավելի քիչ տևողությամբ), միջոցառման կազմակերպիչները պետք է հաշվեն միջոցառմանը սպասվող մասնակիցների ընդհանուր թիվն այն ենթադրությամբ, որ բոլոր մասնակիցները ներկա են գտնվելու միջոցառմանը ողջ ընթացքում: Ավելի երկարատև միջոցառումների դեպքում, ինչպիսիք են 1 օր կամ ավել տևողությամբ միջոցառումները, միջոցառման կազմակերպիչները պետք է որոշեն մասնակիցների թիվը՝ հիմնվելով միջոցառման ամենամարդաշատ ժամին սպասվող մասնակիցների ընդհանուր թվի վրա: Եթե միջոցառման կանխատեսված մասնակցությունը միջոցառման ընթացքում ցանկացած պահի մոտենում է Մեգա Միջոցառումների չափին, Միջոցառման կազմակերպիչներից պահանջվում է հետևել Մեգա Միջոցառումների համար սահմանված կանոններին և ստուգել ներկաների պատվաստման կարգավիճակը:

Միջոցառման կազմակերպիչները, որոնք ձգտում են չգերազանցել ավելի երկարատև միջոցառումների համար Մեգա Միջոցառումների սահմանաչափը, պետք է դիտարկեն տոմսերը նախօրոք վաճառելը (timed ticketing)՝ միջոցառման ողջ տևողության ընթացքում անձանց մասնակցությունը բաշխելու, ինչպես նաև աշխատակիցներին տեղաբաշխելու համար, որպեսզի նրանք վերահսկեն մարդկանց բազմությունը և ուղղորդեն մասնակիցներին միջոցառման ընթացքում:

10. Ի՞նչ տեղի կունենա, եթե հայտնաբերվի, որ հաստատությունը չի ստուգում հաճախորդների և/կամ աշխատակիցների պատվաստման կարգավիճակը:

Շրջանի առողջապահական ոլորտի տեսուչները կայցելեն այդ հաստատություն և կստուգեն այդ հաստատությունների գործունեությունը սովորական աշխատանքային ժամերին: Եթե առաջին այցի ժամանակ տեսուչը որոշի, որ բիզնեսի գործունեությունը չի համապատասխանում Հանրային Առողջության Պատասխանատուի Հրամանին (օրինակ՝ չի ստուգվում բոլոր հաճախորդների պատվաստման կարգավիճակը), ապա տեսուչը խախտումը կարձանագրի տեսչական հաշվետվության մեջ և կնշանակի օր՝ պահանջներին համապատասխանելու համար, և խախտումները պետք է շտկվեն մինչև այդ ամսաթիվը: Եթե հետագա ստուգման ընթացքում հայտնաբերվի, որ դեռ առկա է անհամապատասխանություն, ապա հաստատությանը կներկայացվի Վարչական Տույժ 500 ԱՄՆ դոլարի չափով, իսկ Հանրային Առողջության Վարչությունը կշարունակի հետևել տվյալ հաստատությունում համապատասխանության հաստատմանը:

11. Արդյո՞ք պատվաստման կարգավիճակի ստուգումից հետո դեռ պահանջվում է դիմակ կրել փակ տարածքներում:

Այո, շարունակվում է պահանջվել փակ տարածքներում դիմակ կրելը, նույնիսկ եթե անձը պատվաստված է: Դիմակները կարելի է հանել ակտիվորեն ուտելիս և խմելիս: Ուտելու և խմելու ընթացքում այցելուները, հաճախորդները կամ հյուրերը պետք է նստած լինեն սեղանի կամ բարի մոտ,





տոմսերով նստելու թույլտվությամբ նստատեղերում կամ վայրերում: Խորհուրդ է տրվում տարբեր խմբերի միջև պահպանել ֆիզիկական հեռավորություն՝ նվազեցնելու վարակի տարածման վտանգն այն վայրերում, որտեղ հաճախորդներին թույլատրվում է ակտիվորեն ուտել կամ խմել:

12. Արդյո՞ք դուք ունեք պաշտոնական ցուցանակ, որը փաստում է, որ պատվաստումը կամ թեստավորումը օրինական պահանջ է:

[Հանրային Առողջության Վարչության ցուցանակը](#) կարող եք գտնել [COVID-19-ի Կանխարգելման Ուղղված Լավագույն Գործողությունները. Ուղեցույց Բիզնեսների և Աշխատակիցների Համար](#) կայքէջում:

